

ՆԵՐԱԾՈՒԹԻՒՆ

Հայերի մեծագոյն մասը, որի հետ մենք խկազէս գործ ունինք մեր աշխատառութեան մէջ, և որը թւով մօտ երեք միլիօն է հաշւում, բնակում է հետևեալ՝ մասամբ բնական և մասամբ էտնօգրաֆիական սահմանների մէջ՝ կովկասեան լեռնաշղթան, Կասպից ծովը, Դրանա-քրդական բարձրութիւնները, Եփրատ գետը, Սև ծովը և Վրաստանը *). Արդ երկրում հայերի հետ միասին բնակուած են նոյնապէս տաճիկները, քրդերը և ատրքէջան թրքերը: Ռուսական Հայաստանում (ալոինքն Նրեանի նահանգում) և Թիւրքա-Հայաստանի մի քանի մասերում, հայերը մեծամասնութիւն են կազմում **): Խոկ Տաճիկա-Հայաստանի միւս մասերում և Անդրկովկասի արևմտեան կողմերում նրանք թէն մեծամասնութիւն չեն կազմում, այնուամենայնիւ նշանաւոր տակոս են ներկալացնում:

Մինչև մեր գարի տառջին քառորդի վերջը ամբողջ լիշտեալ երկիրը գտնուում էր կատարեալ շփոթութեան և անա-

*) Համարեա նոյն սահմաններն է դնուած Հայաստանին Շապէնը, ոՀայաստան կոչուած երկիրը մի ժամանակ կազմում էր բատկան նշանաւոր պետութիւն 1500 վերստ երկարութեամբ (Եփրատ գետի ափերից մինչև Քուռաք ու Կասպից ծովը) և 1200 վերստ լարնութեամբ (Լազերի երկիրից, Կոլխիդից, Կովկասեան լեռնաշղթալից ու Իրէրիալից մինչև Դիարբէքիրի սահմանները): Շուեն. История. Памятка. Стр. 1.

**) Հայերը ամենախիտ կերպով գտնուում են. Ակէքսանդրապոլում 91% /_o, Ախալքալաքի գտնուում 76% /_o, Նոր-Բալազէտի ու Եջմիածնի գտնուում 64% /_o և Շուշուար գտնուում 58% /_o. (Отчетъ Импер. Геогр. Общ. XVIII).

պահովութեան մէջ։ Հայերն էլ ամեն կողմից հալածում էին որպէս գեավուրներ։ Ոչ մի հայկական գիւղ, ոչ մի հայրնակ քաղաք խաղաղ, ապահով գոյութիւն չուներ։ Դիւզեր ու քաղաքներ քարուքանդ անելը տաճկաց կամ պարսից զօրաց ձեռքով, կամ թէ նոյն իսկ մահմեդական ազգաբնակութեան ձեռքով, առօրեալ երեսովներ էին։ Միայն իրանց անտեսական գործունէութեամբ էին կարողանում պահպանել հայերը իրանց գոյութիւնը, ըստ որում քարուքանդ արածը նորից վերականգնում էին ժամանակի ընթացքում։ Բայց անտեսական կեանքի մէջ գեռ լառաջադիմական քայլեր անելը անհնար էր։

Ակսած մեր գարի սկզբից երկրի մի քանի մասերը փոքր առ փոքր անցան ուռւաց ձեռքը, ուստի և հնարաւոր եղաւաւելի ապահով ապրել և աւելի արդիւնաւէտ կերպով տընտեսութեամբ պարապել։ Եւ իսկապէս էլ, այն ժամանակից սկսած, հայ ժողովրդի անտեսական դրութիւնը օրէցօր բարութեց։

Սրա հակառակ, Տաճկական Հայաստանում գեռ մինչև օրս շարունակում է կալքի և կեանքի անապահովութիւնը։ Ալսեղ հայերը ոչ միայն անտեսապէս չեն լառաջադիմում, այլև Բերլինի կոնգրէսից սկսած, մինչև անդամ անհերքելի կերպով յետադիմում են, որովհետեւ մահմեդական ազգաբնակութեան ֆանտիկոսութեան հետ, միացել է կառավարութեան կորստարեր քաղաքականութիւնը, որի նպատակն է հայերին ստիպել երկրից գուրս գաղթել, կամ թէ տեղն ու տեղը բնաջինը անել։ Այդպիսի հանգամանքներում ի հարկէ անտեսութիւնն էլ իւր բոլոր ճիւղերով մնում է առանց զարգանալու։

Սոյն ասպարիզում ռուսական հայերի մէջ վերակազմութիւն է կատարւում։ Արգիւնագործութեան ազգային ձեռքը չեն կարողանում մրցել մօտեցող եւրոպական քաղաքակըրթութեան հետ, ուստի և մեծ մասամբ անհետանում են, իսկ փոքր մասամբ որոշ չափով կերպարանափոխուելով, այնուամենայնիւ պահպանում են իրանց գոյութիւնը։

բոլոր վերև լիշտուած հանգամանքները պայմանաւորում են հայ ժողովրդի տնտեսութիւնը, որի մէջ կարելի է նկատել երեք գլխաւոր շրջաններ:

1) Հայ ժողովրդի մեծագոյն մասը զբաղուած է երկրագործութեամբ, որը գեռ կատարւում է հին, նախնական եղանակներով: Միայն ուռւաց հայերի մէջ նկատում են գէսլի նոր ձեւերը անցնելու փորձեր:

2) Քաղաքային ազգաբնակութիւնը պարապւում է արհեստագործութեամբ, որ գեռ բազմիցս հին տեղական ձերով է կատարւում:

3) Գոյութիւն ունի վաճառականների մի նշանաւոր գասակարգ, որը անդական հում նիւթերը հաւաքում և արտահանում է և սրա փոխարէն եւրոպական արհեստագործութեան որդիւնքները ներմուծում է և երկրի մէջ տարածում:

Սակայն աւելի մեծ քաղաքներում և հում նիւթերի առատ եղած տեղերում սկսել են յառաջ գալ արհեստագործութեան եւրոպական ձեւերը, որոնք միանալով ներմուծուաղ տարրանքների հետ, մրցում են անդական արդիւնքների հետ և սպառնում նրանց բնաջինջ անել, և կամ տռնուազը յետ են մզում նրանց: Բայց այդ պրօցեսը գեռ իւր գաղաթնակէտին չէ հասել, ուստի և բոլոր հին ձեւերը գեռ շատ տեղ գոյութիւն ունին:

Խնչ վերաբերում է յատկապէս արհեստագործութեանը, այստեղ էլ մենք կարող ենք զանազանել երեք տեսակ տնտեսութիւն, նայելով թէ ով է աշխատութեան պարագլուխը:

1) Ըստանիքի մի անդամը մասնաւորապէս արհեստագործութեան վարողն է: Արհեստագործութիւնը կատարւում է ընտանիքի մէջ, Ալդ ձեւ գիւղական ազգաբնակութեան մէջ սովորականն է և շարունակում է փոքր քաղաքներում, թէև մասամբ կերպարանափոխուած, իսկ մեծ կամ

քաղաքակրթուած քաղաքներում համարեա բոլորովին անհետանում է:

2) Աեռնարկութեան գլխին կանգնած է վարպետը: Ալդ ձեւը գիւղական կետնքում գեռ սաղմալին գրութեան մէջ է: Փաքը կ քաղաքներում զարգանում է նա իւր բոլոր ոյժով և արդիւնագործական ասպարիզում գլխաւոր գերն է խաղում: Իսկ շփուելով դրսից եկող քաղաքակրթութեան հետ, թուլանում է նա և գնում է գէպի անկումը:

3) Վերջապէս արդիւնագործութեան պարագլուխը, սեփականատէրը, հանգիսանում է գրամատէրը, որը շատ անգամ ինքը արհեստաւոր չէ, բայց և այնպէս կարողանում է բաժանել գործը և հսկել նրա վրայ և շահագործել իւր օգտին:

Արդիւնագործութեան լիշեալ երեք տեսակները կը նկարագրենք առանձին-առանձին գլուխների մէջ:

